

Սարգիս Ռ. Մելքոնյան
Պատմ. գիտ. թեկնածու

«Եկեղեցու կեանքի և պատմութեան մէջ ևս որոմն ու ցորե-
նը խառն են, գիտութիւնն է, որ մաքրում, զտում է պիտանին
անպիտանից:

Աստուածաբանական գիտութիւնը եկեղեցու ինքնաքննադա-
տութիւնն է, որից նորա ինքնագիտակցութիւնն է բխում, իսկ
ինքնագիտակցութիւնը հետևողական յառաջադիմութեան ամե-
նակարևոր պայմանն է»¹:

Գարեգին Ա. Հովսեփյան

ԳԱՐԵԳԻՆ Ա ՀՈՎՍԵՓՅԱՆ. ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՈՒ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆՐ

Մաս Գ: Բարենորոգչական ծրագրերը գիտակրթական
ուղղրտում*



Գարեգին վարդապետ
Հովսեփյան

Բանալի բառեր – Գարեգին Հովսեփյան, Սուրբ
Էջմիածին, Գևորգյան հոգևոր ձեմարան, Հայ եկեղե-
ցու բարեկարգում, մատենադարան, տպարան, հոգ-
ևորականների կրթություն:

Մուտք

Գարեգին Ա Հովսեփյանի ծննդյան 150-ամյա-
կին նվիրված մեր հոդվածաշարի նախորդ մա-
սում² ընդհանուր ակնարկով անդրադարձանք
Հայոց եկեղեցին բարեկարգելու նրա ծրագրերին՝
հանգելով այն եզրակացության, որ Սբ. Էջմիած-
նում 1897-1917 թվականներին ծավալած իր գոր-
ծունեության ընթացքում Գարեգին վարդապետը

Ժ (ԺԶ) փարի, թիվ 3 (63), հայխա-սեպտեմբեր, 2018

ՎԷՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 11.10.2018:

1 Տեն **Յովսէփեան Գ. վրդ.**, Եկեղեցի Հայաստանեայց. գիտութիւն և եկեղեցի, «Արարատ» հանդէս, Էջմիածին, 1900, էջ 376:

2 Տեն **Մելքոնյան Ս. Ռ.**, Գարեգին Ա. Հովսեփյան. Երանաշնորհ Հայրապետն ու մեծ գիտնականը. Մաս Բ: Բարենորոգչական ծրագրերը (1897-1917 թթ.), «Վէմ» համահայկական հանդես, N 2 (62), Եր., 2018, էջ I (277)-XV(291):

եկեղեցու բարեկարգումը պատկերացնում էր հետևյալ հիմնական խնդիրների լուծմամբ.

ա) Մայր Աթոռի գիտահանրամատչելի պարբերականի բարենորոգում,
բ) ծխական քահանաների կրթության և ընտրության խնդիրների բարենորոգում,

գ) գիտության դերի բարձրացումը Եկեղեցու բարենորոգման հարցում,
դ) Մայր Աթոռի մատենադարանը դարձնել կենտրոնական, հայագիտական լիակատար մատենադարան,

ե) Եկեղեցու գործուն ներգրավվածությունը բարեգործական և առհասարակ սոցիալական ամենատարբեր խնդիրներում,

զ) գիտակրթական հաստատությունների բարեփոխման և Եկեղեցում դպրոցի դերի բարձրացման անհրաժեշտություն,

է) Եկեղեցու կանոնախրավական համակարգի վերանայում և բարենորոգում,

ը) գործուն տպարանի անհրաժեշտությունը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ազդեցությունն ուժեղացնելու և հայության տարբեր շերտերում ամրապնդելու համար³:

Սակայն նախորդ հոդվածում առանձին մանրամասնությամբ ներկայացրել ենք միայն Մայր Աթոռի գիտահանրամատչելի պարբերականի և ծխական քահանաների ընտրության եղանակի բարեկարգմանն ուղղված Հովսեփյանի ծրագրերը⁴: Բայց ինչպես իրավացիորեն նշում է Խաչիկ Բաֆֆի Գազերը, Գարեգին վարդապետի ուշադրության կենտրոնում ամենից հաճախ գտնվում էին հոգևորականների գիտական-աստվածաբանական կրթության և առհասարակ ուսման կազմակերպման հարցերը, քանի որ Հայոց եկեղեցին բարեկարգելու հիմնական նախապայմաններից մեկը Գարեգին Հովսեփյանը համարում էր **գիտությունն ու կրթությունը** (ընդգծումը մերն է – Ս. Մ.)⁵:

Ուստի շարունակելով Գարեգին Հովսեփյանի բարենորոգչական ծրագրերի ուսումնասիրությունը՝ անհրաժեշտ ենք համարում ներկա հոդվածով անդրադառնալ 20-րդ դարի առաջին տասնամյակներին նրա կողմից առաջադրված և իրականացված բարենորոգչական ծրագրերին գիտակրթական ոլորտում, որոնց ծանոթանում ենք Գարեգին վարդապետի մի քանի հոդվածներից, ինչպես նաև տպագիր ու անտիպ վավերագրերից:

1. Գիտության բարեկարգման խնդիրները

Կրթությունն ու գիտությունը Գարեգին Հովսեփյանի գործունեության առանցքային նշանակություն ունեցող հարցերն էին մասնավորապես նրա վարդապետ եղած տարիներին: Իր կյանքի այս շրջանում Գարեգին վարդապետը, կրթության ոլորտում զբաղեցնելով տարբեր պաշտոններ, ակ-

3 Տես նույն տեղում, էջ I (277) – V(281):

4 Տես նույն տեղում, էջ VI (282) – XII(288):

5 Տես **Ղազարյան Խ. Բ.**, Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, գերմաներենից թարգմանեց **Ա. Հայրունին**, Ս. Էջմիածին, 1999, էջ 82:

տիվորեն հանդես էր գալիս հրապարակային և մասնավոր առաջարկներով՝ ներկայացնելով իր տեսլականը ոլորտի բարեկարգման համար:

Գեռևս 1900 թ. «Արարատ» հանդեսում Հովսեփյանը հրատարակում է մի հոդված՝ «**Գիտություն և եկեղեցի**»⁶ վերնագրով, որով ձգտում էր ցույց տալ եկեղեցու և գիտության կապը, ինչպես նաև գիտության անհրաժեշտությունը եկեղեցու մտավոր և բարոյական առաջադիմության համար: Հոդվածում նա մասնավորապես նշում էր, որ ճշմարտությանը հասնելու համար ոչ թե պետք է ընթանալ գիտության և կրոնի հակադրման ճանապարհով, այլ դրանց զուգահեռման. «Քրիստոնեություն և գիտություն տարբեր են միմեանցից, բայց նոքա հակադրություններ չեն. Աւետարանի ազատ ոգին ամենևին դէմ չէ գիտութեան: Ընդհակառակն Աւետարանի քարոզած բարոյական կատարելութեան համար նպաստաւոր միջոցներ են գիտութիւնն ու արուեստը: **Իսկական գիտութիւնը** հետամուտ է միմիայն ճշմարտութեան, իսկ ճշմարտութիւնը ազատութիւն (Յովհ. Ը. 32) և զօրութիւն է տալիս մարդուն: Ծշմարտութիւնն ըմբռնելու երկու ճանապարհ ունինք, կրօն և գիտութիւն, երկուսն էլ մարդկային սահմանաւոր հոգու համար միևնոյն Աստուծոյ տնօրէնութիւններն ու վերջնական նպատակները հասկանալու միջոցներ»⁷:

«Իսկական գիտություն» ասելով՝ Հովսեփյանը նկատի ուներ գիտության բոլոր այն ճյուղերը, որոնք արդարությամբ հետամուտ են՝ պարզելու ճշմարտությունը: Այստեղ նա չի առանձնացրել նաև **բնական գիտությունները**, որոնք, որպես այդպիսին, կապ չունեն հոգևոր գիտությունների հետ, սակայն, ըստ Հովսեփյանի, հոգևոր գիտությունների հետ միասին «Աստուծոյ իմաստութեան և ամենակարողութեան յայտարարներ են»⁸:

Ամբողջացնելով եկեղեցու բարեկարգման գործում կրոնի և գիտության փոխլրացման ու կապի մասին իր գաղափարները՝ Գարեգին վարդապետը հոդվածի ամփոփման մեջ նշում է հետևյալ երեք պայմանները⁹ դրանք իրագործելու համար.

ա) գիտական պատրաստություն ունեցող մասնագետների առկայություն,

բ) հայագիտական և աստվածաբանական կենտրոնական լիակատար մատենադարանի հիմնում¹⁰,

գ) գիտնականների պատրաստի աշխատությունները հրատարակելու միջոցների ապահովում¹¹:

Գիտնական մասնագետների պատրաստման խնդիրը Հովսեփյանը դիտարկում է նույն «Գիտություն և եկեղեցի» հոդվածում՝ նշելով, որ այս հարցը արդեն իսկ գործնական ընթացքի մեջ է դրվել Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսի օրոք, իսկ ժամանակի Մկրտիչ Ա Խրիմյան հայրապետի տնօ-

6 Յովսեփեան Գ. վրդ., Եկեղեցի Հայաստանեայց. գիտութիւն և եկեղեցի..., էջ 373-378:

7 Նույն տեղում, էջ 373:

8 Նույն տեղում:

9 Տե՛ս Նույն տեղում, էջ 377-378:

10 Գիտական մատենադարանի և գրադարանի վերաբերյալ Հովսեփյանի գաղափարները տե՛ս Յովսեփեան Գ. վրդ., Եկեղեցի Հայաստանեայց. Մայր Աթոռի Մատենադարանը, «Արարատ» հանդես, Էջմիածին, 1901, էջ 18-25; հմմտ. Ղազարյան Խ. Բ., նշվ. աշխ., էջ 85-87:

11 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Յովսեփեան Գ. վրդ., Մ. Աթոռի տպարանը, «Արարատ» հանդես, Էջմիածին, 1908, էջ 245-253; հմմտ. Ղազարյան Խ. Բ., նշվ. աշխ., էջ 120-124:

րինությամբ Գևորգյան հոգևոր ձեմարանն ավարտած սաները մեկնում են Ռուսաստանի և այլ երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ տարբեր գիտությունների մեջ մասնագիտանալու և հետագայում ձեմարանում դասավանդելու համար¹²:

Այս գործընթացը կարևորագույն նշանակություն ուներ, քանի որ այդ տարիներին Գևորգյան ձեմարանը առանցքային դերակատարություն ուներ թե՛ Հայ եկեղեցու և թե՛ բովանդակ իմաստով հայ իրականության ընթացքի վրա: Ինչպես նշում է Հովսեփյանը. «Ձեմարանի յառաջադիմությունը նշանակում է Հայ եկեղեցու գիտութեան յառաջադիմություն»¹³: Անշուշտ, Գևորգյան ձեմարանը նախևառաջ կրթարան էր և ոչ թե գիտահետազոտական կենտրոն, սակայն Գարեգին վարդապետի համոզմամբ այնտեղ դասավանդող ուսուցիչների, և հատկապես եվրոպական կրթություն ստացած գիտնական միաբանների ձեռքով պետք է մշակվեր այն գիտությունը, որ կդառնար «հոգևոր և գիտնական կրթութեան միջոց»¹⁴:

Ելնելով այս հանգամանքից՝ Գարեգին Հովսեփյանն իր ծրագրերում Հայ եկեղեցին բարեկարգելու գործում մեծ տեղ է հատկացնում մասնավորապես դպրոցների դերի բարձրացմանն ու հոգևորականների կրթության գործին:

2. Գարեգին Հովսեփյանի ծրագրերը կրթական ոլորտի բարեկարգման ասպարեզում

Գերմանիայում ուսումն ավարտելուց և Սբ. Էջմիածին վերադառնալուց հետո Գարեգին Հովսեփյանը հրավիրվում է Գևորգյան հոգևոր ձեմարան իբրև աստվածաբանության և հայոց մատենագրության պատմության դասախոս: Սակայն 1900-ի մարտին հիվանդության պատճառով նա ստիպված է լինում թողնել ձեմարանում ստանձնած դասախոսություններն ու «Արարատի» խմբագրի պաշտոնը և մեկնել Թիֆլիս¹⁵:

Թիֆլիսում նա Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի կարգադրությամբ նշանակվում է Սբ. Սարգիս վանքի վանահայր և թեմական կենտրոնական խորհրդի ավագ անդամ, որն առաջնորդից հետո երկրորդ պաշտոնն էր¹⁶: Կարճ ժամանակ անց Վրաստանից Էջմիածին է կանչվում Վիրահայոց թեմի առաջնորդ Գևորգ արք. Սուրենյանցը¹⁷, որից հետո Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի 1901 թ. օգոստոսի 20-ի կոնդակով¹⁸ Գարեգին վարդապետը նշանակվում է Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգաբարձության նախագահ: Շուրջ մեկ տարվա կազմակերպված և բարեխիղճ գործունեության արդյունքում Ներսիսյան դպրոցի հոգաբարձության 1902 թ. հունիսի 15-ի ժողո-

12 Տե՛ս **Յովսէփեան Գ. Վրդ.**, Եկեղեցի Հայաստանեայց. գիտութիւն և եկեղեցի..., էջ 377:

13 Նույն տեղում, էջ 377:

14 Նույն տեղում, էջ 377:

15 Տե՛ս **Կենսագրություն Երանաշորի Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանի**, Ա. Ինքնակենսագրություն, «Հասկ», Անթիլիաս, 1952, յուլիս-սեպտեմբեր, էջ 225 (այսուհետ՝ **Ինքնակենսագրություն**): Տե՛ս նաև Կաթողիկոսական դիվանի երկու գրությունները, **Գարեգին Ա. Յովսէփեան**, Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, հատ. Ա., կազմող՝ **Գ. Աւագեան**, Սբ. Էջմիածին, 2017, էջ 23-24 (այսուհետ՝ **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր, հատ. Ա.):

16 Տե՛ս Ինքնակենսագրություն, էջ 225:

17 Տե՛ս Ինքնակենսագրություն, էջ 225:

18 Տե՛ս **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր հատ. Ա., էջ 25-26:

վում Գարեգին Հովսեփյանն ընտրվում է հոգևոր դպրոցի վերատեսուչ¹⁹: Այս ընտրությունը տեղի է ունենում առանց նախկին աշխարհական տեսուչին իր պաշտոնից ազատելու: Միաժամանակ և՛ հոգևորական, և՛ աշխարհիկ տեսուչ ընտրելով՝ հոգաբարձուների խորհուրդը ցանկանում էր, որ առաջինը հսկի միայն կրոնագիտական առարկաների ուսուցումն ու դասավանդումը, իսկ երկրորդը՝ բնական գիտությունների և այլ առարկաների²⁰:

Սակայն Գարեգին Հովսեփյանի ընտրությունը չի վավերացվում Ամենայն Հայոց Հայրապետի կողմից, որը հոգաբարձությանն ուղղված կոնդակում խնդրի վերաբերյալ նշում էր հետևյալը. «Ուշադիր խելամտութեամբ կարդացի ընտրութեան պաշտօնագիրն, որով Տէր Գարեգին վարդապետ Յովսէփեան ընտրած էք իբրև վերատեսուչ, և չարձակելով նախկին տեսուչ Բալաղեան [...]: Առ այս հոգաբարձութիւնդ պատշաճ և կարևոր դատած է նկատելով դպրանոցի ընդարձակութեան և բազմադէմք առարկաներու պէսպէսութեան և այլն: Այս դրութիւն նորաստեղծ մի դրութիւն է: Ո՛չ միայն օրինակ չունի, այլ և հակառակ է կանոնագրին, զոր այժմ ի ձեռին ունիք. չէ տեսնուած երբէք, որ մի դպրանոցին երկու պատասխանատու և վարող պաշտօնեաներ լինեն պատասխանատու»²¹:

Կոնդակում Խրիմյան Հայրիկը Ներսիսյան դպրանոցի հոգաբարձությանն առաջարկում էր տեսուչ ընտրել Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանին²², իսկ Գարեգին վարդապետ Հովսեփյանին 1902 թ. օգոստոսին նա հետ է կանչում Մայր Աթոռ²³: Նախքան Գևորգյան հոգևոր ձեմարանում պաշտոն ստանալը Գարեգին Հովսեփյանը 1902 թ. նշանակվում է Երևանի թեմական դպրոցի տեսուչ²⁴, և չնայած դպրոցն իր իսկ բնորոշմամբ՝ «ողջ թեմի կովի բույնն էր»²⁵, այնուամենայնիվ իր պաշտոնավարման երեք տարիների ընթացքում կարողանում է հարթեցնել այնտեղ առկա խնդիրները՝ փոփոխություններ մտցնելով քննական համակարգի մեջ²⁶: Նախկինում կատարվող հրապարակային քննությունների փոխարեն այժմ «տեսուչը մի կամ երկու ընթերակայի հետ աւարտական առարկաներից Ա-Ե դասարան միայն դասարանական գրաւոր և վերստուգողական բերանացի քննութիւն պիտի անէր»²⁷: Ըստ Գարեգին Հովսեփյանի՝ քննությունների այսպիսի եղանակը պետք է ունենար հետևյալ առավելությունները. ա) աշակերտները զերծ էին մնալու ֆիզիկական և մտավոր ուժերի վնասակար լարումից, որը հաճախ էր լինում հրապարակային քննությունների ժամանակ, բ) դպրոցի վարչությունը և մանկավարժական մարմինը հնարավորություն էին ստանում ստուգել ուսուցիչների աշխատանքն ու աշակերտների կողմից դասերի յուրացման աստիճանը, գ) ոչ ավարտական առարկաների ստուգումը պետք է իրականացներ տեսուչը վերստուգողական բերանացի քննությամբ՝ առանձին կամ մի ընթերակայի հետ դ) և վերջապես՝ ավարտական Զ դասարան

19 Տե՛ս նույն տեղում, էջ 50-52, 54-55:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 59:

21 Նույն տեղում, էջ 59:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 60:

23 Տե՛ս նույն տեղում, էջ 57:

24 Տե՛ս Ինքնակենսագրություն, էջ 226-227:

25 Նույն տեղում, էջ 227:

26 Տե՛ս Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր հատ. Ա., էջ 66:

27 Նույն տեղում:

նի աշակերտները հրապարակային քննություն պետք է տային միայն հիմնական առարկաներից (եկեղեցական պատմություն, ուսումնաՄր. Գրոց, հանրահաշիվ, ռուսաց պատմություն, ռուսաց լեզու, հայոց պատմություն, ընդհանուր պատմություն, հայոց մատենագրություն, հոգեբանություն և հայոց լեզու), իսկ մնացյալ առարկաներից (տոմարագրություն, տրամաբանություն, գերմաներեն, երկրաչափություն և ֆիզիկա) պետք է հանձնեին գրավոր քննություն²⁸:

Քննական այսպիսի համակարգի գրանցած հաջողությունները հանգեցնում են նրան, որ Գարեգին Հովսեփյանն առաջարկում է հենց տարվա սկզբից նշյալ ուղղությամբ ընթանալ՝ «խրաքանչիւր երկամսեակի վերջում դասարանական վերստուգողութեան քննութիւններ անելով»²⁹, որով, ըստ նրա, աշակերտները կազատվեին մանկավարժական գիտության կողմից ընդհանրապես վնասակար համարված հրապարակային քննություններից՝ հնարավորություն ստանալով անընդհատ կրկնությունների միջոցով ավելի հիմնավոր յուրացնել անցածը³⁰:

Հաշվի առնելով Գարեգին վարդապետի հաջողությունները որպես Երևանի թեմական դպրանոցի տեսուչ մասնավորապես ուսումնական և վարչական բարեկարգումների տեսանկյունից՝ Խրիմյան Հայրիկն իր 1905 թ. օգոստոսի 20-ի կոնդակով³¹ նրան նշանակում է Գևորգյան հոգևոր ձեմարանի տեսուչ: Կոնդակում մասնավորապես կարդում ենք. «Տեսեալ Մեր զվորձառութիւն և զժրաջանութիւն Քր և մանաւանդ լուեալ Մեր բազմիցս զգոհունակութիւն հոգաբարձութեանն զխոհեմ և աչալորջ կառավարութենէդ, բարոք համարեցաք կոչել զՔեզ ի պաշտօն տեսչութեան Հոգևոր ձեմարանիս մերոյ ի բարոյական և յուսումնական յառաջադիմութիւն նորայ»³²:

Գարեգին Հովսեփյանը Գևորգյան հոգևոր ձեմարանի տեսչի պաշտոնին լինում է երկու տարբեր, սակայն միևնույն ժամանակ ծանր խնդիրներով լի ժամանակահատվածներում:

3. Գարեգին վարդապետը Գևորգյան հոգևոր ձեմարանի տեսուչ 1905–1906 թթ.

Առաջին անգամ Հովսեփյանը ձեմարանի տեսուչ է նշանակվում Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի կողմից 1905–1906 թթ.: Նրա պաշտոնավարման այս շրջանում տեղի են ունենում ուսանողական տարբեր խռովություններ, որոնք ունեն թե՛ ներքին³³, թե՛ արտաքին³⁴ պատճառներ: Չնայած այդ ամենին՝ այնուամենայնիվ, Գարեգին Հովսեփյանը լծվում է ձեմարանը բարեկարգելու գործին:

Ինչպես արդեն մի քանի անգամ նշել ենք մեր ուսումնասիրության նա-

28 Տե՛ս նույն տեղում:

29 Նույն տեղում:

30 Տե՛ս նույն տեղում:

31 Տե՛ս նույն տեղում, էջ 76–77:

32 Նույն տեղում, էջ 76:

33 Տե՛ս նույն տեղում, էջ 79–84:

34 Տե՛ս **Յովսէփեան Գ. Վրդ.**, Եկեղեցի Հայաստանեայց. Հայոց եկեղեցին 1906 թուին, «Արարատ» հանդէս, Էջմիածին, 1907, էջ 33–43:

խորդ մասերում³⁵, Գևորգյան հոգևոր ձեռնարանն ի սկզբանե հիմնվել էր «**Ժառանգավորաց ձեռնարան**» լինելու, այսինքն՝ Հայոց եկեղեցու համար կրթյալ հոգևորականներ պատրաստելու նպատակով, սակայն ձեռնարանի ուսումնական ծրագիրը, ինչպես նշում է Մաղաքիա արք. Օրմանյանը, Մուրատյան և Հայկազյան վարժարանների նմանողությամբ էր կազմվել՝ «աւելի ընդհանուր քան եկեղեցական ուսմանց դրութեամբ. այնպէս որ ձեռնարանը բոլորովին ձրի և ազատ երկրորդական ուսումնարանի դիրքն առաւ»³⁶: Ուստի օգտվելով այսպիսի պայմաններում ուսում ստանալու հնարավորությունից՝ ուսանողների թիվը ժամանակի ընթացքում հեշտությամբ և տարապայմանորեն աճում է³⁷: Սակայն կրոնագիտական և աստվածաբանական առարկաների բացակայության պատճառով հիմնադրումից սկսյալ՝ գրեթե 15 տարի, ձեռնարանի շրջանավարտներից որևէ մեկը ցանկություն չի հայտնում դառնալ հոգևորական³⁸: Այս խնդրի լուծման համար Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսի հրավերով 1887-ին Սբ. Էջմիածին է ժամանում Մաղաքիա եպս. Օրմանյանը, որ միայնակ ստանձնում է եկեղեցագիտական ու աստվածաբանական բոլոր առարկաների դասավանդումը³⁹: Չնայած այն հանգամանքին, որ Օրմանյան Սրբազանը ստիպված է լինում մեկ տարի անց ռուսական իշխանությունների ճնշման ներքո լքել Սբ. Էջմիածինը և վերադառնալ Կոստանդնուպոլիս, այնուամենայնիվ ձեռնարանի ուսումնական ծրագրում կատարած նրա բարեկարգման և իր անձի ուղղակի ազդեցության շնորհիվ 1888-ին ձեռնարանի սաներից մի քանիսը ցանկություն են հայտնում համալրելու միաբանության շարքերը:

Օրմանյանի հեռանալուց հետո Գևորգյան ձեռնարանի կրոնագիտական և աստվածաբանական առարկաների բացը լրացնում են ժամանակի գերմանական համալսարաններում ուսանած նրա աշակերտները, որոնցից առաջինը հիշատակելի է Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանի անունը: Վերջինս 1894-ից դասավանդում էր ձեռնարանում, իսկ 1899-ից նշանակվում է տեսուչի պաշտոնում⁴⁰: Գևորգյան ձեռնարանում Կարապետ վարդապետի գործունեությունը դժբախտաբար համընկնում է արևմտահայության 1894-1896 թթ. կոտորածների հետ, որոնց նա հետևողականորեն անդրադառնում է արևելահայության մեջ տարբեր հատվածներում խոսացած իր քարոզներում⁴¹: Այնուամենայնիվ, լինելով ձեռնարանի նախկին սան և հետագայում արդեն դասախոս ու տեսուչ՝ նա լավագույնս տիրապետում էր հոգևորականների կրթության բնագավառում առկա տարաբնույթ բարդ խնդիրներին, ուստի հանդես էր գալիս ոլորտը բարեկարգելու տարբեր առաջարկներով, որոնք հայկական մամուլի էջերում արժանանում էին խիստ քննադատության: Բանավիճելով իր քննադատների հետ՝ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը հանգում էր այն եզրակացությանը, որ հոգևորականների աստվածաբանա-

35 Տե՛ս Մելքոնյան Ս. Ռ., Գարեգին Ա. Հովսեփյան. Երանաշնորհ Հայրապետն ու մեծ գիտնականը. Մաս Ա: Ուսումնառության տարիները (1877-1897 թթ.), «Վէմ» համահայկական հանդես, N 1 (61), Եր., 2018, էջ 1(265)-XXIX(293):

36 Օրմանեան Մ. Արք., Ազգապատում, հատ. Գ, Էջմիածին, 2001, սյուն 4878:

37 Տես նույն տեղում, սյուն 4878:

38 Այս մասին տե՛ս Օրմանեան Արքեպս. Մ., Խոնք և Խօսք, Իր կեանքին վերջին շրջանին մէջ (Յետմահու հրատարակութիւն), Երուսաղէմ, 1929, էջ 142-149:

39 Տես նույն տեղում:

40 Տե՛ս Ղազարյան Խ. Բ., նշվ. աշխ., էջ 27:

41 Տե՛ս նույն տեղում, էջ 27-35:

կան կրթության կազմակերպման հարցն այնքան ժամանակ ընթացք չի ստանա, քանի դեռ ինչպես հոգևորականության, այնպես էլ աշխարհիկ քաղաքացիների շրջանում բացակայում է դրա կարևորության ըմբռնումը⁴²: Այս խնդրի լուծումը նա տեսնում էր միայն հոգևոր կրթության և դաստիարակության միջոցով, սակայն Հայոց եկեղեցին, նույնիսկ ունենալով Գևորգյան հոգևոր ձեռնարանի նման ուսումնական հաստատություն, չէր կարող այդ խնդիրը լուծել, քանի դեռ չուներ որակյալ աստվածաբանական ուսուցչական կազմ⁴³ և կայուն ծրագիր ու մեթոդաբանություն՝ կրոնագիտական ու աստվածաբանական առարկաների ուսուցման համար: Ահա այս խնդրի լուծմանն է լծվում Գարեգին վրդ. Հովսեփյանը ձեռնարանի տեսուչի պաշտոնում նշանակվելուց կարճ ժամանակ անց:

Իր պաշտոնավարման առաջին ամիսներին Գարեգին Հովսեփյանը ստիպված է լինում զբաղվել 1905 թ. հունվարից Ռուսաստանում սկիզբ առած հեղափոխական շարժման արդյունքում Գևորգյան ձեռնարան ներթափանցած ուսանողական ելույթների⁴⁴ հանդարտեցմամբ, որից հետո միայն 1906 թ. գարնանը նա հնարավորություն է ունենում կազմել և Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացնել ձեռնարանի բարեփոխումների իր առաջին լայնածավալ ծրագիրը⁴⁵: Այն, ինչպես նշում էր Հովսեփյանը, կազմվել էր ուսուցչական դասի հետ միասին գումարված բազում ժողովների արդյունքում՝ հաշվի առնելով նաև վերջին տարիներին ուսանողական խռովությունների հիմնական պատճառները⁴⁶:

Բարեփոխումների ծրագիրը բաղկացած էր երկու հիմնական մասերից՝ ուսումնական և վարչական:

Գևորգյան հոգևոր ձեռնարանը կազմված էր երկու ուսումնական բաժիններից՝ դպրոցական և մասնագիտական: Դպրոցական մասը, ինչպես թեմական մյուս հոգևոր դպրանոցները, բաղկացած էր վեց դասարանից, սակայն վեցամյա ուսումը բավարար չէր լիարժեք միջնակարգ կրթությունն ապահովելու համար: Ինչպես նշում էր Գարեգին Հովսեփյանը, պետական միջնակարգ դպրոցները սովորաբար կազմված են լինում յոթ կամ ութ դասարաններից, այնինչ ձեռնարանում նույն ծրագիրը ստիպված աշակերտներին է մատուցվում վեց տարում, որի պատճառով աշակերտները զրկվում են հունարեն և լատիներեն սովորելու հնարավորությունից, իսկ համարողական ու բնագիտական առարկաներից և ընդհանուր պատմությունից կազում են թերուսուցման պատճառով⁴⁷: Հետևաբար, ըստ ներկայացված ծրագրի, առաջարկվում էր բացել նաև 7-րդ դասարան՝ վեցամյա կրթությունը դարձնելով յոթամյա⁴⁸:

Դպրոցական բաժնում 7-րդ դասարանի բացումն ինքնանպատակ չէր և չէր սահմանափակվում միայն առարկաների թվի ու ժամերի ավելացմամբ: Այն պետք է դառնար մասնագիտական ուղղվածությամբ դասարան,

42 Տե՛ս նույն տեղում, էջ 40:

43 Հմտ. նույն տեղում, էջ 41:

44 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Յովսեփեան Գ. վրդ.**, եկեղեցի Հայաստանեայց, Հայոց եկեղեցին 1906 թուին..., էջ 33-43; տե՛ս **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր հատ. Ա., էջ 78-87:

45 Ծրագիրն ամբողջությամբ տե՛ս նույն տեղում, էջ 109-116:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 109-110:

47 Տե՛ս նույն տեղում:

48 Տե՛ս նույն տեղում, էջ 110:

որտեղ խորացված պետք է ուսուցանվեին մասնավարժական և կրոնագիտական առարկաներ՝ ուսուցիչներ ու քահանայացուներ պատրաստելու համար⁴⁹: Ելնելով այս որոշումից՝ ամբողջությամբ փոփոխության են ենթարկվում նաև մյուս դասարանների առարկայացանկերը, որոնք դառնում են ավելի համակարգված:

Առաջարկվում էր բարեկարգել նաև ձեմարանի քառամյա մասնագիտական բարձրագույն ուսումնական բաժինը, որը պետք է բաղկացած լիներ աստվածաբանական և հայագիտական բաժիններից⁵⁰: Այդպիսով, կազմվում են 14-ական առարկաներից բաղկացած երկու տարբեր առարկայացանկեր՝ համապատասխանաբար աստվածաբանների և հայագետների համար, ինչպես նաև 11 առարկայից բաղկացած առանձին ընդհանուր առարկայացանկ՝ նախատեսված երկու ուղղությունների համար էլ, որի առարկաները պետք է ընտրեին իրենք ուսանողները՝ ըստ իրենց ցանկության⁵¹:

Ըստ ծրագրի՝ նախատեսվում էր բարեկարգել նաև Գևորգյան հոգևոր ձեմարանի կառավարման համակարգը: Ինչպես շատ հարցեր Մայր Աթոռում, այնպես էլ ձեմարանի հետ կապված գրեթե ամեն խնդիր որոշվում էր միանձնյա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Ըստ ներկայացված ծրագրի՝ անհրաժեշտ էր համարվում ժողովականության սկզբունքով լուծում տալ հետևյալ հարցերին⁵²:

1. Քանի որ ձեմարանի ներքին խաղաղությունը և մտավոր ու բարոյական առաջադիմությունը հիմնականում կախված էին տեսուչի և ուսուցիչների հարաբերություններից, ապա առաջարկվում էր ձեմարանի տեսուչին ընտրել ուսուցչական կազմի կողմից: Չնայած այն հանգամանքին, որ դպրանոցական և մասնագիտական բաժինները տարբեր հաստատություններ էին, այնուամենայնիվ նպատակահարմար էր համարվում երկուսից կազմել խառը ժողով, որն էլ պետք է ընտրեր ընդհանուր տեսուչ և ներկայացնեի Ամենայն Հայոց կաթողիկոսին ի հաստատություն⁵³: Տեսուչը պետք է լիներ աստվածաբանական և հայագիտական առարկաների գիտակ՝ ելնելով ձեմարանի մասնագիտական երկու ուղղությունների պահանջներից⁵⁴: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Գարեգին վրդ. Հովսեփյանն առաջարկում էր տեսուչին ընտրել միայն մասնագիտական բաժնի ուսուցիչների միջից, քանի որ դպրանոցական բաժնի ուսուցիչները հիմնականում նոր ձեմարանավարտներ էին և ամբողջությամբ չէին տիրապետում ո՛չ նշյալ մասնագիտություններին և ո՛չ էլ ձեմարանի կառավարման համակարգին⁵⁵:

2. Տեսուչի օգնականին նույնպես պետք է ընտրեր խառը ժողովը՝ նախքան այդ ստանալով տեսուչի հավանությունը:

3. Ձեմարանի ուսուցիչների և վերակացուների ընտրությունը պետք է կատարվեր տեսուչից, նրա օգնականից և դպրանոցական ու մասնագիտական բաժիններից ընտրված մեկական ուսուցիչներից կազմված խորհրդի

49 Տե՛ս նույն տեղում:

50 Տե՛ս նույն տեղում, էջ 110–111:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 112:

52 Այս մասին մանրամասնությամբ տե՛ս նույն տեղում, էջ 114–115:

53 Տե՛ս նույն տեղում, էջ 113–114:

54 Տե՛ս նույն տեղում, էջ 114:

55 Տե՛ս նույն տեղում:

կողմից:

4. Ուսուցիչներից կամ վերակազմներից որևէ մեկին ազատելու դեպքում տեսուչը նախ պետք է ապացույցներ ներկայացներ հատուկ այդ առիթով ընտրված չորս անձերի առաջ, որոնցից երկուսի թեկնածությունը ներկայացնելու էր տեսուչը, իսկ մյուս երկուսին՝ այն անձինք, ում պատրաստվում էին հեռացնել: Ներկայացված չորս հոգին պետք է ընտրեին հինգերորդին, ով նախագահելու էր ձևավորված խորհուրդը: Կայացված վճիռը տեսուչը պետք է ներկայացներ Ամենայն Հայոց հայրապետի տնօրինությանը:

5. Հատուկ ընտրովի մարմին պետք է ձևավորվեր նաև տնտեսական և ուսումնական առաջադիմության հսկման համար:

Այսպիսով Գևորգյան հոգևոր ձեմարանի կառավարման համակարգում նոր մշակույթ էր ներդրվում, որը պետք է զգալի չափով նվազեցներ ընդունվող որոշումների բևեռացումը:

Բացի վերոնշյալ կետերից՝ հարց էր բարձրացվում նաև ուսուցիչների աշխատավարձերի վերաբերյալ, որոնք այլ կրթարանների համեմատությամբ վարձատրվում էին ցածր, ինչպես նաև դասաժամերի շատության պատճառով հնարավորություն չունեին մասնավոր պարապունքներ անցկացնել: Այս պայմաններում ուսուցիչները ստիպված էին լինում ավելի շատ դասաժամեր ստանձնել, ինչի արդյունքում տուժում էր ձեմարանի կրթության ընդհանուր որակը⁵⁶:

Ձեմարանի բարեփոխումների ծրագրում առանձին մանրամասնությամբ բարձրացվում են նաև ուսանողներին վերաբերվող հարցերը: Դրանք կազմվել էին՝ հաշվի առնելով 1905-ից ձեմարանում չդադարող ուսանողական ելույթները, որոնք, ըստ բարեփոխումների ծրագրի, հարուցում էին գլխավորապես «անկանու մատակարարություն կերակրոց և պարտաւորեալ յաճախումն նոցին յեկեղեցին»⁵⁷:

Մանդի հարցը հնարավոր է լինում լուծել սեղանատան անջատմամբ, իսկ եկեղեցի հաճախելու հարցի վերաբերյալ ուսուցչական ժողովը խնդրում է կաթողիկոսին՝ մշակել նոր կարգ, ըստ որի՝ ձեմարանի ուսանողները եկեղեցում պետք է սպասավորեին միայն կիրակի և տոն օրերին: Մյուս օրերի ժամասացությունների համար առաջարկվում էր կարգել առանձին երգիչներ և ազատել ուսանողներին այդ պարտականությունից:

Նշյալ երկու հիմնական խնդիրներից զատ՝ ուսանողների առօրյայում առաջարկվում էր կատարել հետևյալ փոփոխությունները:

1. Ուսանողների համար պարտադիր համարվող հոգևորական համագեեսոր փոխել աշխարհիկ համազգեստի, քանի որ առաջինն անհարմար էր ուսումնառության ընթացքում կիրառելու տեսանկյունից: Հոգևորականի զգեստը պարտադիր համարել ուսանողների մեջ միայն եկեղեցի հաճախելիս:

2. Առաջարկվում էր ձեմարանի ուսումնառության գիշերօթիկ լինելը դարձնել երթևեկ՝ ուսանողներին նշանակելով համապատասխան կրթաթոշակ: Այս խնդիրն առաջացել էր այն անհարմարությունից, որ առկա էր անչափահաս և արդեն չափահասության տարիքում գտնվող ուսանողներին

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 114-115

⁵⁷ Նույն տեղում, էջ 115:

մի հարկի տակ պահելուց: Խնդրի վերաբերյալ մանկավարժական ժողովից զատ՝ առանձին առաջարկ էր անում նաև տեսուչ Գարեգին վարդապետը, ըստ որի՝ առաջարկվում էր ձեմարանից առանձին հատկացնել հանրակացարան, որտեղ ըստ ցանկության ուսանողները կկարողանային բնակվել՝ վայելելով որոշակի վերահսկվող ազատություն:

Առաջին հայացքից թվում է, թե այսպիսի փոփոխությունները հոգևոր ձեմարանը պետք է դարձնեին ավելի աշխարհիկ: Սակայն հաշվի առնելով 20-րդ դարի առաջին տասնամյակում տեղի ունեցող զարգացումներն արևելահայության շրջանում, ինչպես նաև այն հանգամանքը, որ Գևորգյան հոգևոր ձեմարանն այդ ժամանակ դեռևս միակ լուրջ ուսումնական հաստատությունն էր Հայաստանում, բարձրացված խնդիրների տրամաբանությունն ավելի ընկալելի է դառնում:

Առանձին հետաքրքրություն ունի ձեմարանի ուսումնական մասի բարեկարգման առաջարկը: Այն բաժանելով աստվածաբանական և հայագիտական առանձին բաժինների՝ իրենց համապատասխան առարկայացանկերով՝ հայկական կրթական մոդելում հիմք էր դրվում ճյուղային մասնագիտացման: Մի երևույթ հատկապես՝ աստվածաբանական գիտության զարգացման մեջ, որն առավելապես զարգացում էր ապրել Գերմանիայում 19-րդ դարի վերջերին՝ հենց այն ժամանակաշրջանում, երբ այնտեղ էր ուսանում Գարեգին Հովսեփյանը⁵⁸:

Իրենց գործունեության արդյունքում Գարեգին Հովսեփյանը և նրա գաղափարակից ընկերները թե՛ Մայր Աթոռի պարիսպներից ներս և թե՛ դրանցից դուրս հանդիպում են խիստ քննադատության՝ արժանանալով տարբեր պիտակավորումների: Սա հիմնականում արդյունք էր այն բանի, որ հայ հասարակությունը իր հավաքական մտածողությամբ դեռևս պատրաստ չէր այն փոփոխություններին, որ առաջարկում էին այս գործիչները: Ուստի անընդհատ շարունակվող քննադատություններն ու վեճերը հանգեցնում են նրան, որ 20-րդ դարի առաջին տասնամյակում Հայոց եկեղեցու բարեկարգմամբ մտահոգ երեք հիմնական գործիչները՝ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանը և Երվանդ վրդ. Տեր-Մինասյանը, 1906 թ. մայիսի 29-ին դիմում են ներկայացնում Խրիմյան Հայրիկ կաթողիկոսին՝ խնդրելով ազատել իրենց Գևորգյան հոգևոր ձեմարանի ուսուցչությունից⁵⁹: Դիմումի մեջ մասնավորապես կարդում ենք. «Յուսով մեծաելաք մեք յայդ ասպարէզ (նկատի ունեն ձեմարանում ուսուցչությունը – Ս. Մ.) և խղձի մտօք գուն գործեցաք, զի ի շարս առարկայից ուսման բարձրագոյն հոգևոր կրթարանիս հայոց՝ ուսումն հայրենի կրօնին զիւրն գրաւէր տեղի պատշաճաւոր, հանելով զհինն ի գանձուց մերոց նախնեաց և միանգամայն զնորն ի հրահանգաց հնտագունիցն արդեան գիտնոց Երոպիոյ, զոր և յարմարելով համբակացն մերոց հասողութեան:

Այլ աւանդ, յօրէ անտի երևելոյ մեր ի վերայ ասպարէզիդ, տեղացին ի գլուխ մեր ամենուստեք թշնամանք միայն և նախատինք, անձնադիր վաստակք մեր ի վնաս աշակերտելոցն համարեցան և բարի նպատակք նեն-

58 Գարեգին Հովսեփյանի ուսումնառության մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ս. Ռ., Գարեգին Ա. Հովսեփյան. Երանաշնորհ Հայրապետն ու մեծ գիտնականը. Մաս Ա: Ուսումնառության շրջանը (1877-1897 թթ.)... էջ I-XXIX:

59 Դիմումի տեքստը տե՛ս Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր հատ. Ա., էջ 129-130:

գաւորագոյն բացատրութեամբք անգօսնեցան. անունն «աստուածաբան» եղև բան ծաղու և անարգանաց ի բերանս այնոցիկ իսկ, յորոց թուէր թէ առաւել իրաւունք էին ակն ունելոյ խրախուսանաց և քաջալերութեան»⁶⁰:

Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի 1906 թ. հունիսի 17-ի կոնդակով⁶¹ Գարեգին Հովսեփյանից հետո ձեմարանի տեսուչ է նշանակվում Մեսրոպ վրդ. Տեր-Սովսիսյանը:

4. Գևորգյան հոգևոր ձեմարանի տեսուչ 1915–1917 թթ.

Երկրորդ անգամ Գարեգին վարդապետը Գևորգյան հոգևոր ձեմարանի տեսուչ է նշանակվում Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի կողմից 1915 թվականին⁶²: Տարբեր վավերագրերից պարզ է դառնում, որ Գարեգին Հովսեփյանը, ելնելով ձեմարանում իր տեսչական գործունեության նախորդ շրջանում տեղի ունեցած իրադարձությունների դառը փորձից, երկար ժամանակ երկմտել է՝ ընդունել այս առաջարկությունը, թե՛ ոչ⁶³: Ի վերջո նա համաձայնում է ստանձնել այդ պաշտոնը, սակայն, ինչպես վկայում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող անտիպ մի վավերագիր, նախքան ձեմարանի տեսչի պարտականություններին անցնելը, Գարեգին վարդապետը համառոտ գրությամբ Գևորգ Ե. կաթողիկոսին է ներկայացրել Գևորգյան ձեմարանի բարեկարգմանն ուղղված իր նախապայմանները: Այդ փաստաթղթին մանրամասնությամբ ծանոթանալու համար, այն ամբողջությամբ կներկայացնենք ստորև:

Գարեգին վրդ–ի կողմից Գևորգ Ե. Կաթողիկոսին
ներկայացված պայմանները՝ ձեմարանի տեսչությունը
ստանձնելու համար⁶⁴

Նորին Սրբութիւն Տ. Տ. Գէորգ
Ս. Կաթողիկոս Ամենայն Հայոց

Յայտարարութիւն

Ձեր Վեհափառութիւնը հաճել էր առաջարկել նուաստութեանս ընդունելու ձեմարանի տեսչութիւնը: Բերանացի արդէն բացատրել եմ, թէ ինչ դժուարութիւններ կան ներկայ պայմաններում կարգաւորելու և իւր նպատակին օգտակար դարձնելու և թէ ինչ անհրաժեշտ խնդիրներ կան, որ այժմէն իսկ պէտք է ի նկատի ունենալ ցանկալի հետևանքների հասնելու համար: Համարձակւում եմ Ձեր հրամանի համեմատ գրաւոր ու երկրորդել համառոտ:

Ըստ իս ձեմարանի կարգաւորութեան արգելք հանդիսացող կէտերից մէկը անպատրաստ ուսուցիչների դասատուութիւնն է յատկապէս լսարաններում:

60 Նույն տեղում, էջ 129:

61 Տե՛ս նույն տեղում, էջ 131–132:

62 Այդ մասին Գևորգ Ե-ի կոնդակը տե՛ս նույն տեղում, էջ 178–179:

63 Այդ մասին տե՛ս Թիֆլիսից Սահակ քահանայի նամակը Գարեգին վարդապետ Հովսեփյանին, Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 450; Գևորգ վարդապետ Չորեքչյանի նամակը Գարեգին վարդապետ Հովսեփյանին, ՄՄ, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 450:

64 ՄՄ, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 451:

Նորաւարտ համալսարանականը հնարաւորութիւն չունի առանց յատուկ պատրաստութեան լսարանական բաժնի դասատու դառնալ: Հարկաւոր է պատրաստուել որոշ առարկաների համար մասնագիտաբար, իսկ այդ անհնարին է, երբ նոր հրաւիրուած դասատուն ստիպուած է քսան և աւելի դասեր յանձն առնել նաև դպրոցական բաժնում, ոպէս գի փոքր ինչ բաւարար ռոճիկ ստանայ: Ճեմարանի բարձրակարգութիւնը ուսումնական տեսակէտով՝ որպէս Հայոց միակ բարձրագոյն դպրոցի Մ. Աթոռի հովանաւորութեան տակ՝ նիւթական որոշ զոհողութիւն է պահանջում. պէտք է աշխատել քիչ դասերով և բաւարար ռոճիկով ապահովել դասատուներին, որպէս գի նոքա ևս հնարաւորութիւն ունենան պատրաստուիլ այն առարկաներից, որոնք իբրև մասնագիտութիւն պէտք է աւանդուին լսարաններում: Այդպիսի առարկաներ պիտի նկատուին յատկապէս հայագիտականները, որոնց մէջ էլ Հայոց եկեղեցւոյ հետ կապուած գիտութիւնները, որպէս գի հետզհետէ հնարաւոր լինի հայ գիտութիւն մշակել և մեր միջնակարգ դպրոցների համար հայ լեզուի, դպրութեան և պատմութեան դասատուներ հայթայթել: Դասատուների պատրաստութեան և վարձատրութեան խնդրում մենք ևս պէտք է մասամբ, քանի հնարաւոր չէ լիովին, հետևենք պետական և արտասահմանեան ճեմարանների և կրթական բարձր հաստատութիւնների օրինակին: Այստեղ ուսուցչապետը վարձատրութիւն է ստանում ոչ թէ դասերի թուի համեմատ, այլ որոշ և հաստատուն ռոճիկ՝ ծառայութեան և աստիճանի համեմատ: Բաւարար ռոճիկ նշանակելով հանդերձ՝ պէտք է հետամուտ լինենք մասնագէտ դասատուներ պատրաստել լսարանների համար, որոնք մշտապէս կամ շատ երկար ժամանակի համար իրենց կապուած զգան հաստատութեան հետ, իրենց համար կոչում համարեն՝ ընտրած առարկան իբրև գիտնական ուսումնասիրել և աւանդել և ոչ թէ ճեմարանը ժամանակաւոր պաշտօնատեղի համարել, մինչև դուրսը աւելի յարմար տեղ գտնուի: Ճեմարան պիտի մտնեն տեսուչն ու դասատուները այն հաւատով և համոզմամբ, թէ շատ երկար տարիների համար, գուցէ և միչև իրենց կեանքի վերջը կապուած են հաստատութեան հետ, եթէ բարեխղճաբար կատարեն իրենց պարտքը: Այդ խնդրի համար էական նշանակութիւն կունենայ նաև տարիներով յուզուած ուսուցչական խնայողական արկղի ու ծերութեան թոշակի հարցը:

Մի երկրորդ հանգամանք ճեմարանի անբարեկարգութեան, կարծում ենք, վարչութիւնների շուտ շուտ փոփոխութիւնն է և անսխտեմ, շատ ժամանակ իրարու հակառակ, կառուարութիւնը: Ոչ մի վարչութիւն հնարաւորութիւն չի ունենալ կարճ ժամանակի մէջ և՛ լաւ խումբ պատրաստել և՛ աշակերտներին կարգապահութեան մէջ մարզել, և՛ որոշ ուղղութիւն ստեղծել հաստատութեան մէջ, որ համապատասխան լինի ծրագրուած նպատակին: Այդ հնարաւոր է միայն տարիների անսայթաք, համակարգ և միախորհուրդ գործունէութեամբ:

Երրորդ կարևոր կէտը տեսչի հեղինակութեան խնդիրն է, որ կախուած է մասամբ իւր անհատական կարողութիւնից, գործի մէջ ցոյց տուած հմտութիւնից և անձնուիրութիւնից, բայց և մասամբ արտաքին հանգամանքներից: Տեսչի հեղինակութեան պահպանութեան գլխաւոր պայմանը Մ. Հայրապետի կատարեալ վստահութիւնն է և անմիջական բարձր հովանաւորութիւնը, որ իւր բարերար հետևանքը կունենայ կարգապահութեան և ուսումնական յառաջադիմութեան վերայ: Աշակերտութիւնը և ուսուցչութիւնը համոզուած պէտք է լինեն լիովին այն բանի մէջ, որպէսզի տեսչի խոսքն ու կարգադրութիւնը կշիռ ունենայ ընդհանրութեան աչքում :

Չորրորդ՝ ըստ կանոնադրութեան տեսուչը պէտք է ունենայ իւր օգնակա-

նը, և այդ նախատեսուած է յօգուտ ընդհանուր ղեկավարութեան յաջողութեան: Ամեն բանի մէջ չ'պէտք է տեսուչը անմիջական կարգադրող և դատաւոր յանդիսանայ, այլ օգնականը, որով մեծ չափով պահպանուած կլինի տեսչի հեղինակութիւնը: Բացի դորանից օգնականը կթեթևացնէ ձեմարանի տնտեսական հոգացութեան թիւը, որով տեսուչը հնարաւորութիւն և ժամանակ կունենայ շարունակ հետևելու ուսուցիչների դասաւանդութեան, որ ամենակարևոր խնդիրներից մէկն է ուսումնական յառաջադիմութեան համար:

Ձեմարանի մասնագիտական բաժնի համար նշանակուած է երեք տարուայ ընթացք, որ անբաւարար է ուսանողներին կատարելութեան հասցնելու: Մինչդեռ ռուսաց բոլոր հոգևոր ձեմարանները չորս տարուայ ընթացք ունին: Մենք ի հարկէ կանոնադրութիւնից դուրս գալ չենք կարող և նոր իրաւունք ստանալն էլ իւր դժուարութիւններն ունի, բայց, գուցէ, հնարաւոր կլինէր հարկաւոր համարուած ժամանակ բանալ մի նախապատրաստական լսարան, որով մի տարի աւելի ժամանակ կունենայինք ուսանողներին մասնագիտական մեթոդների հետ աւելի ծանոթացնելու և գիտութեան ճաշակը նրանց մէջ զօրացնելու: Բայց այդ ապագայի գործ է:

Այս մտքերի գործնական եզրակացութիւնը կարելի է ամփոփել հետևեալ կէտերում.

ա) Տեսուչ նշանակել ոչ պակաս քան հինգ տարով:

բ) Լսարանների նախահաշուի վերայ թոյլ տալ աւելացնելու տարեկան մինչև 5000 ռ., որպէս զի հնարաւորութիւն ստեղծուի հետզհետէ մասնագէտ դասատուներ ունենալ: Ապագայում կարող եմ Ձերդ Վեհափառութեան աւելի մանրամասն ծրագիր ներկայացնել այս կէտի իրագործման համար⁶⁵:

գ) Թոյլ տալ ըստ կանոնադրութեան տեսչի օգնական ունենալ:

դ) Մեր միաբանութեան կարող անդամներից հարկաւոր դէպքում գործակցութեան հրաւիրել իբրև ուսուցիչ կամ պաշտօնետայ:

ե) Նախահաշուի հաստատութեան և այլ կարևոր խնդիրների համար կախումն ունենալ միայն Ձերդ սրբութիւնից, վայելելով վստահութիւն և մշտաջան հովանաւորութիւն, առանց որի ապարդիւն կանցնի ամենայն աշխատանք⁶⁶:

Այս ամենը ներկայացնելով Ձերդ Վեհափառութեան բարեհաճ ուշադրութեան և կարգադրութեան՝

Մնամ Խ[ոնարի] Ծ[առայ]՝ Գարեգին Վարդապետ:

30 մարտի 1915 թ.

Ս. Էջմիածին

Համեմատելով վերոնշյալ գրության մեջ Գարեգին վարդապետի կողմից բարձրացված խնդիրները՝ կարող ենք հստակ նշել, որ ձեմարանը 1906-ից դրական իմաստով որևէ փոփոխություն չէր կրել, սակայն չնայած այն հանգամանքին, որ Գևորգ Սուրենյանցը, դեռևս եպիսկոպոս եղած ժամանակ, հանդիսանում էր Գարեգին վարդապետի ամենաակնառու քննադատներից մեկը⁶⁷, այնուամենայնիվ

65 Նույն փաստաթղթի երկրորդ մասում կա պահպանված այս հինգ կետերի այլ տարբերակ, որում բ) կետի վերջին նախադասությունը բացակայում է:

66 Այս հինգ կետերի մյուս տարբերակում ե) համարի «առանց որի ապարդիւն կանցնի ամենայն աշխատանք» հատվածը բացակայում է:

67 Այդ մասին տե՛ս Յովսէփեան Գ. Վրդ., Եկեղեցի Հայաստանեայց, Նորութիւնք. «Արարատ» հանդէս, Էջմիածին, 1908, էջ 364-373; հմմտ. Ղազարյան Խ. Բ., նշվ. աշխ., էջ 124-128:

հենց նրա օրոք և նրա հովանավորությամբ 1912–1915-ին Գևորգյան ձեմարանում իրականություն են դառնում Հովսեփյանի 1906-ի բարեփոխումների ծրագրի հետևյալ կետերը.

ա) ձեմարանի դպրանոցական բաժնում բացվում է յոթերորդ դասարան և կատարվում է նոր դասաբաշխում,

բ) մասնագիտական բարձրագույն ուսումնական բաժինը տրոհվում է երկու մասնագիտական ուղղությունների՝ աստվածաբանական և հայագիտական, որոնցից յուրաքանչյուրի համար կազմվում է առանձին ծրագիր,

գ) ձեմարանի Մանկավարժական խորհրդին հանձնարարվում է կազմել նոր կանոնադրություն նախագիծ և հանձնել Ամենայն Հայոց կաթողիկոսին ի տնօրինություն,

դ) 1915-ին Գարեգին վարդապետին նշանակելով ձեմարանի տեսուչ՝ Գևորգ Ե. կաթողիկոսը հրահանգում է նրան շուտափույթ կազմել ուսուցչական մարմին, որի կազմի ընտրության իրավունքն այսուհետ շնորհվում էր տեսուչին⁶⁸:

Թերևս այսպիսի շրջադարձը Սուրենյանց կաթողիկոսի և Գարեգին վարդապետի հարաբերությունների մեջ պետք է բացատրել այն օրհասական իրավիճակով, որում գտնվում էր հայությունը 1910-ական թվականներին: Բացի այս Հայոց եկեղեցու բարեկարգմամբ մտահոգ գործիչներից, ովքեր ունեին բարձրագույն աստվածաբանական կրթություն՝ ստացած եվրոպական համալսարաններում, այդ ժամանակ Սբ. Էջմիածնում մնացել էր միայն Գարեգին վարդապետ Հովսեփյանը, ինչն իսկապես բացառիկ էր դարձնում նրա թեկնածությունն այդ պաշտոնում:

Թվում էր, թե ստեղծված իրավիճակում, երբ Գարեգին Հովսեփյանի ծրագրերը վերջապես ունեին Ամենայն Հայոց կաթողիկոսի հովանավորությունը և ընդհանուր առմամբ կար դրանք իրագործելու միտում, այլևս որևէ հանգամանք չի խանգարի ձեմարանի բարեկարգման ընթացքին, սակայն այս անգամ խոչընդոտ են դառնում 1917-ի Ռուսական հեղափոխության արդյունքում Հայաստանում առաջացած ներքաղաքական խնդիրները, որոնցից զերծ չեն մնում նաև ձեմարանի ուսանողները:

Նույնիսկ այդպիսի զարգացումների պայմաններում Գևորգյան հոգևոր ձեմարանի Մանկավարժական խորհուրդը՝ տեսուչ Գարեգին վարդապետի նախագահությամբ, մի շարք այլ բարենորոգչական ծրագրեր է մշակում: Հատկապես հետաքրքրական էր քննական համակարգի մեջ փոփոխություններ անելու ծրագիրը⁶⁹, ըստ որի, նախատեսվում էր ձեմարանից առհասարակ վերացնել քննությունները և մտցնել դասավանդման մի այնպիսի համակարգ, որի պարագայում ուսանողների առաջադիմությունը հնարավոր կլիներ ստուգել այլ կերպ⁷⁰: Սա իհարկե հետաքրքրական և ժամանակի համար բո-

68 Այս մասին տես Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր, հատ. Ա., էջ 178–179:

69 Տես նույն տեղում, էջ 260–262:

70 Տես նույն տեղում:

լորովին նոր մոտեցում կլիներ կրթական ոլորտում, սակայն ժամանակի քաղաքական զարգացումների և դրանց արդյունքում ասպարեզ եկող տարբեր գաղափարախոսությունների ազդեցության պայմաններում անհնար է դառնում կրթական ոլորտի բարեկարգմանն ուղղված Գարեգին Հովսեփյանի ծրագրերի իրագործումը: Բացի այդ՝ ներքաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով Գևորգյան հոգևոր ձեռնարանի շենքն առհասարակ գրավվում է զինվորականների կողմից, իսկ 1917 թ. դեկտեմբերին այն առժամանակ փակվում է:

Շարունակությունը՝ հաջորդ համարում:

Սարգիս Ռ. Մելքոնյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են գտնվում վարդապետական աստվածաբանությունը, Հայ եկեղեցու քրիստոսաբանության հարցերը, արևելյան եկեղեցիների դավանաբանության պատմությունը, միջեկեղեցական հարաբերությունների պատմական և ներկա գործընթացները:

Summary

GAREGIN A HOVSEPYAN: THE BLISSFUL PATRIARCH AND GREAT SCIENTIST

Part III: Reformation programs in the field of science and education

Sargis R. Melqonyan

Key words – Garegin Hovsepyan, Saint Echmiadzin, Gevorian theological seminary, improvement of the Armenian Church, matenadaran, publishing house, the education of the clergymen.

In our previous article dedicated to the reforming activity of Garegin Hovsepyan we had referred to the programs of the popular scientific periodical of the Holy See and to the one connected with the choice of the priests which, certainly, had vital significance for the improvement of the Armenian Church. But according to Hovsepyan the most significant preconditions for improving the Armenian Church were the science and education. By taking into consideration the above mentioned condition in the present article we have analyzed the programs put forward by him in 1900–1917 in the field of science and education.

At the beginning Garegin Hovsepyan printed his ideas on the given issue in the periodical “Ararat” and put forth the idea that in order to achieve the truth it isn’t necessary to contradict science and religion but they both must be viewed in parallel. While leaving aside the ideological part and passing to the practical one Hovsepyan stated the following three main conditions for the development of science in Mother See: a) the presence of specialists who had undergone sci-

entific preparations, b) the foundation of fully equipped matenadaran of central Armeniology and theology, c) the provision of means for the publication of the scientists' ready works.

Though the above mentioned three points really had crucial significance for the development of the science, nonetheless, Garegin Hovsepyan paid great attention to the educational institutions acting under the control of the Armenian Church. The first of them, where Hovsepyan managed to carry out certain improvements still being an archimandrite, was the diocesan school of Yerevan. After being appointed by the catholicos Mkrtych A. Khrimyan as the surveyor of this school the archimandrite Garegin settled down disputable various issues that were present there by confirming a new system of taking exams.

After conscientiously ruling the diocesan school of Yerevan and settling down the controversy issues there in 1905 Garegin was appointed the surveyor of Gevorgian theological seminary. In 1905-1906 during his years at the office Hovsepyan together with Pedagogical council presented an expanded program of improving the seminary: due to this program he was offering to divide the seminary into two sections, namely, Armeniological and theological ones with their corresponding subjects. Thus, he was establishing in Armenian educational system the model of branch specialization of scientific and educational development that was typical for the German educational system. Besides he was offering to form councils for solving a number of issues in order to avoid the polarization of the seminary. In spite of the fact that the programs put forward by Hovsepyan were rather logical, nonetheless, they were severely criticized and caused various contradictions as a result of which he and his ideological friend were forced to leave the seminary in 1906 due to their application for removal.

In 1915 archimandrite Garegin was appointed the surveyor of Gevorgian theological seminary for the second time and remained in that office till late 1917. This time he was offered this office by the catholicos Gevorg E. Surenyants to whose invitation Hovsepyan presented a project of preconditions and after their assurance he agreed to take the office. While being a surveyor for the second time Hovsepyan succeeded in carrying out the vast amount of the provisions put forward still in 1906 as result of which the following reforms were implemented:

- a) In the school section of the seminary 7th grade was opened and new assignment of academic hours was fulfilled
- b) The upper specialized educational sector was divided into two professional directions, i.e. theological and Armeniological and for each of them a separate curriculum was created.
- c) The Pedagogical council of the seminary was assigned to work out the project of the new charter and hand it to the Catholicos of All Armenians
- d) By appointing archimandrite Garegin as a surveyor of the seminary catholicos Gevorg E. instructed him to make an educational body as soon as possible and the right of choosing the members for it was from now on endowed to the surveyor.

In spite of the fact that now archimandrite Garegin had enough opportunities

as compared to the first period of him being in office for implementing his programs aimed at the improvement of the seminary, however, this time he was impeded by the inter-political events of Armenia conditioned by the Russian revolution of 1917 as a result of which in late 1917 Gevorgian seminary was closed for a time being.

Резюме

ГАРЕГИН I ОВСЕПЯН: БЛАЖЕННЫЙ КАТОЛИКОС И ВЕЛИКИЙ УЧЕНЫЙ

Часть III. Реформаторские программы в научно-образовательной сфере

Саргис Р. Мелконян

Ключевые слова – Гарегин Овсепян, Святой Эчмиадзин, Духовная семинария Геворкян, реформирование Армянской церкви, библиотека, типография, образование священнослужителей.

В нашей предыдущей статье, посвященной реформаторской деятельности Гарегина Овсепяна мы обратились к программам реформирования научно-популярного периодического издания Первопрестольного монастыря и способа выбора священников, несомненно, имеющим важнейшее значение в деле реформирования Армянской церкви. Однако, по Овсепяну, важнейшими предпосылками реформирования Армянской церкви были наука и образование. Исходя из этого, в настоящей статье мы проанализировали программы, выдвинутые им в 1900–1917 гг. с целью реформирования научно-образовательной сферы.

Вначале Гарегин Овсепян опубликовывал свои идеи по этой проблеме в журнале «Арагат», развивая идею о том, что для достижения истины надо идти по пути не противопоставления науки и религии, а утверждения их параллельности. Переходя от идейной части к практическим задачам, Овсепян отмечал следующие три основных условия, необходимых для развития науки в Первопрестольном монастыре: а) наличие специалистов с научной подготовкой, б) основание центральной полной арменоведческой и богословской библиотеки, в) обеспечение средств для публикации готовых трудов ученых.

Несмотря на то обстоятельство, что три вышеупомянутых пункта действительно имели ключевое значение для развития науки, в центре внимания Гарегина Овсепяна находились учебные заведения, действующие под эгидой Армянской церкви. Первым из них, в котором Овсепян, еще будучи архимандритом, имел возможность внести определенные совершенствова-

ния, была Ереванская епархиальная школа. Назначенный в 1902 г. католикосом Мкртчичем I Хримяном инспектором школы архимандрит Гарегин регулирует разные имеющие там место спорные вопросы, утвердив новую систему проведения экзаменов.

После добросовестного управления в 1902–1905 гг. Ереванской епархиальной школой и отрегулирования некоторых спорных вопросов Овсепян в 1905 г. назначается инспектором Духовной семинарии Геворкян. Во время службы в этой должности в 1905–1906 гг. Овсепян вместе с педагогическим советом представляет обширную программу совершенствования семинарии, в которой предлагает разделить семинарию на богословское и арменоведческое отделения со своими соответствующими перечнями предметов. Таким образом, он закладывает в армянской образовательной системе основы отраслевой специализации развития науки и образования, присущей особенно немецкой образовательной модели. Кроме этого, предлагалось для решения ряда задач образовательные советы во избежание поляризации в управлении семинарией. Несмотря на то обстоятельство, что выдвинутые Овсепяном программы были весьма логичными, они были встречены строгой критикой и стали причиной разных споров, из-за чего в 1906 г. он и несколько его единомышленников представили заявления об увольнении из семинарии.

Во второй раз архимандрит Гарегин назначается инспектором Духовной семинарии Геворкян в 1915 г. и остается в этой должности до конца 1917 г. В этот раз на эту должность его приглашает католикос Геворг V Суренянц, которому в ответ на его приглашение Овсепян представляет программу предварительных условий, только в случае обеспечения которых он согласится вступить в должность инспектора семинарии. В годы, когда он был инспектором во второй раз, Овсепяну удастся реализовать значительную часть пунктов программы, выдвинутой еще в 1906 г., в результате чего становится возможным провести следующие совершенствования:

1. В школьном отделении семинарии открывается седьмой класс и производится новое распределение занятий.
2. Высшее профессиональное учебное отделение делится на два профессиональных направления – богословское и арменоведческое, для каждого из которых составляется отдельная программа.
3. Педагогическому совету семинарии поручается составить проект нового устава и передать его в распоряжение католикоса всех армян.
4. Назначив в 1915 г. архимандрита Гарегина инспектором семинарии, католикос Геворг V дал ему указание в срочном порядке образовательный орган, право выбора состава которого впредь присуждалось инспектору.

Хотя в отличие от предыдущего срока управления, теперь архимандриту Гарегину были предоставлены довольно большие возможности для того, чтобы реализовать свои программы по совершенствованию семинарии, в этот раз ему помешали протекающие в Армении в период русской революции 1917 г. внутрисполитические процессы, в результате которых в конце 1917 г. Духовная семинария Геворкян была временно закрыта.

ՀԸԻԳԻՍ

ՊՐԻՆՏՈՒՄ ԳԵՂՈՒՄԱՆԻԿԱՆ ԵՊԱՐԽԻԱԿԱԼ ԴՍԻՊԼԻՆԱՐԻ ՄԱՍԻՆ, 2018

ՀԸԻԳԻՍ ԳԵՂՈՒՄԱՆԻԿԱՆ ԵՊԱՐԽԻԱԿԱԼ ԴՍԻՊԼԻՆԱՐԻ ՄԱՍԻՆ

REFERENCES

1. **Garegin A. Yovsepyan**, Pastatxteri yev nyuteri zhoxovacu, hat. A, kazmox G. Acagyan, Sb. Ejmiacin, 2017.
2. Kensagrutyun Yeranashnorh T. T. Garegin A Katoxikos Yovsepyani, A., Inqnaken-sagrutyun, «Hask», Antilias, 1952, yulis-september.
3. **Ormanean M. Arq.**, Azgapatum, hat. G, Ejmiacin, 2001.
4. **Xazaryan Kh. R.**, Barenorogchakan naxadzernutyunnery Hay Araqelakan yekex-ecum 19-rd dari ve8jin qarordin yev 20-rd dari arajin kesin, germanerenic targ-manec A. Hayrunin, S. Ejmiacin, 1999.
5. **Yovsepyan G. vrd.**, Yekexeci Hayastaneayc. gitutyun yev ekexeci, «Ararat» handes, Ejmiacin, 1900.
6. **Yovsepyan G. vrd.**, Yekexeci Hayastaneayc. Mayr Atori Matenadarany, «Ararat» handes, Ejmiacin, 1901.